ինչ չեն ըրած․ այժմ շատ քիչ կը գործածեն զանոնք, բայց բուն պատճառն է, նապաստակաց գրեթէ բոլորովին սպառիլն։

Որսացող թռչուններն երկու կերպով ձեռք կը բերուին․ մէկ մի, այդ տեսակ թռչնոց ձագերն կը հանեն իրենց բոյներէն, որ շատ դիւրին է միջին Ասիոյ անմչակ ընդարձակ դաշտերու և անապատաց մէջ, ուր ծառոց նուազութեան պատճառաւ, որսացող թռչունք ստիպուած են բոյն դնել գետնի վրայ և մացառներու մէջ։ Մէկ մ'ալ․ երբ կամենան չափահաս ձագեր բռնել, ի գործ կը դրուի ամենապարզ կերպ մը․ կը ժողովեն այնպիսի մեծութեամբ խճաքար, զորս կարենայ թռչունն կլլել առանց դժուարութեան․ քարերը կը ձգեն արեան մէջ․ և կը թողուն որ արիւնն թանձրանայ անոնց վրայ, յետոյ կը դնեն այնպիսի տեղեր՝ ուր սովոր են դիմել որսացող թռչունք, որք որկրամոլութեամբ կը կլլեն այն արիւնոտ խիճերը, այնպէս որ սաստիկ ծանրանալով․ ալ չեն կրնար թռչիլ․ որսորդը նոյն միջոց շուտով վրանին կը յարձակի ու կը բռնէ։ Անշուշտ այսպիսի հանճարեղ որսորդութեան հնարողք, պէտք է Ճենք եղած ըլլան։

Որսացող թռչունք երկու տեսակ են, վայրաթռիչ և բարձրաթռիչ․ Թիւրքմէնք, Ղըրղըզք և Ճենք՝ սովորաբար վայրաթռիչները կ'ընտրեն․ վասն զի ասոք ուղղակի որսին վրայ կ'իջնեն, որպիսիք են, աստղափետուրք և․ (autours) և ուրուրք։ Ընդ հակառակն բարձրաթռիչք կը սըլանան ի վեր օդոյ մէջ՝ որսի վրայ իննալէ առաջ․ այս կերպը թէ և աւելի ընտիր է և յարմար մեծամեծ որսորդութեանց, բայց վայրաթռիչներու նման արագ և բանուկ չէ։

Շատերէ փորձուած և ականատեսներէ հաստատուած է, որ փոքր թռչունք աւելի յարմար են քաջ որսորդութեան քան մեծերը։ Սովորաբար արծիւք այնչափ պատիւ չեն բերեր իրենց տէրերուն, քան որչափ կը բերեն խայտահաւք և արտուտակերք (hobereaux)։

Բազէից ցեղերը․ որ ուրիշ աշխարհաց մէջ, սովորաբար ի միասին կը յարձակին որսի վրայ, Ասիոյ մէջ այդպէս չեն, այլ առանձին առանձին կ'որսան։

Բազէական որսորդութեան գործիներն շատ պարզ են․ կաշեայ կամ կտաւէ գլխանոց մը, թռչնոյն գլուխը գոցելու համար․ զայն տանողին համար՝ այծի մորթէ սպիտակ ձեռնոց մը, երկճղի մը՝ յոգնած բազուկը վրան կռթնցընելու համար, և թմբկիկ մը որսացող թռչունը վերակոչելու համար։

## ԱՐԵԳԱԿՆԱՅԻՆ ԲԺՇԿՈՒԹԻՒՆ

Արեգակն այժմ մեծ դեր կը խաղայ ի բժշկութեան․ ուղղակի արեգական ճառագայթիւք կը բուժին ներքին խոցութիւններ, յօդացաւութիւններ, քնահատութիւններ, ջըղային հիւանդութիւններ, և այլն։

Եթէ կը փափագիմք առողջացընել ծիւրեալ (atrophie) ձեռք մը, մէկուն յօդացաւութիւնը, ջղաց ուժաթափութիւնը, ամենէն ազդու և առաջնակարգ դարմանն է, դնել ծիւրեալ ձեռքը արեգական ջերմիկ ճառագայթից ներքև, և կամ ինքնին ախտացեալը արեգական մէջ թողուլ այնքան ժամ՝ որչափ որ կրնայ դիմանալ։

Քնահատութեան և ջղային ակարութեանց դարմանն է արեգական մէջ լաւ մի քնանալն։ Քաշեցէք հիւանդին անկողինը պատուհանին մօտ, և թողուցէք որ հիւանդը բաւական ժամ հոն արեգական մէջ քնանայ։ Արեգական ճառագայթքն ոչ միայն մարդուս ջերմութիւնը կ'առաւելուն, այլ կ'ունենան մեր վրայ տարրաբանական և ելեկտրական ազդեցութիւնք։ Ինչպէս արդի նշանաւոր բժիշկ մը կ'ըսէր, « Շատ հաւանական է որ արեգական ճառագայթքն մեր կազմութեան ներքին հիւսուածոց վրայ աւելի ազդեցութիւն ունենան՝ քան թէ ելեկտրական հոսանքն » ։

Շատ հմուտ բժիշկք փորձով կը հաստատեն, որ արեգական ազդեցութիւնը միակ դեղ է ջղային և տապախառն (inflammatoire տճ. իլթիհաբի) ցաւերու։

Գլխի ցաւ ունեցող մը թող երթայ արեգական մէջ կենայ, և պիտի տեսնէ որ այս նորագիւտ դրութեամբ՝ գլխին ցաւը կ'անցնի։

Երբ որևիցէ հիւանդութիւն մը կ'ուզեմք արեգական ազդեցութեամբ անցընել, պէտք է ամենաթեթև զգենուլ և այնպէս արևուն մէջ կենալ․ որչափ բարակ ըլլան զգեստք՝ այնքան շուտ կ'ըլլայ առողջութիւնն։

digitised by A.R.A.R.@

Ամերիկացի բժիշկ մը կըսէ, որ արդի վիրաբուժութիւնը որչափ որ ամէն տեսակ միջոցներով դեղ և դարման կ'ընէ տեսակ տեսակ ծանր հիւանդութեանց, սակայն այնչափ ազդու չեն՝ որչափ արեգակնային բժշկութիւնն, որ կ'առողջացընէ հերաձև ծաւալումն (anévrisme capillaire) երակաց ծաւալումը, տեսակ տեսակ մարմնոյ կեղտերն, մորթային խլիրդն (cancer de la peau) կոչուած հիւանդութիւնը, պիսակաւոր հիւանդութիւնը (maladie tachetée) և ուրիշ զանազան մորթային հիւանդութիւնք ։

Դեռ անցեալ տարիներն էր որ Լոնդրայի բժշկաց մին կնոջ մը երեսի վրայ գոյացած կեղտն անցուց, ոսպնաձև ապակիաւ հաւաքընելով կեղտին վրայ արևու կիզիչ ճառագայթն ։ Նոյն դրութեամբ անցուց նաև ուրիշի մը դիմաց վրայ գոյացած վնասակար ուռեցքն ։

Յիշեալ ամերիկացի բժիշկը կը գրէ՝ որ մինչև այս դարուս վերջերը չէ գտնուած այնպիսի կիզողական դեղ մը, որ կարենայ նոյն ազդեցութիւնը ունենալ, ինչ որ ունին արեգական ճառագայթքն ։

Դեղատանց մէջ գտնուած որ և իցէ կիզողական դեղերը միշտ կը ջանանք զգուշութեամբ գործածել վասն զի անոնք երբեմն փոխանակ օգտակար ըլլալու վնասակար կ'ըլլան. ընդհակառակն արեգական կիզողական ազդեցութիւնը եթէ օգտակար ալ չըլլայ վնասակար ալ չէ, և կրնամք նաև մեր կազմութեան ամենափափուկ հիւսուածոց վրայ ազդել արեգական ճառագայթքը առանց վախնալու որ վնասուինք անոր ։ Երբ հիւանդին պալարները այրենք և կիզունք ոսպնաձևաւ մը՝ կեդրոնացընելով արևու ջերմութիւնը պալարաց վրայ, այն ատեն հիւանդին կրած ցաւը ոչինչ է. և հազիւ թէ հեռացընեմք պալարէն արեգական ջերմութիւնը, իսկոյն ցաւն ևս կ'անցնի ։

Զարմանալի զօրութիւն մի կայ արեգական ճառագայթից մէջ, որ դեռ ևս մեզ անծանօթ է ։

Թոքերու տկարութիւն ունեցողքը, կուրծքը բաց քանի մը ժամ արեգական առջև թող կենայ. քիչ օրէն կը տեսնէ արեգական մոգական յատկութիւնները ։ Նոյն կերպով կարելի է անցունել նաև ներքին վէրքերը ։

Առանց մանրամասն հիւանդութեանց իջնելու կրնամք ըսել՝ որ արևու ջերմութիւնը՝ չի թողուր որ մազերը թափին, դեղ և դարման է ներքին բորբոքմանց, պալարաց հուսկ ապա մի միայն դեղ է քնահատութեան ։

## ԱՅԼ ԵՒ ԱՅԼՔ

Աչք. — Աչքն որ մարդուս տեսութեան ամենէն հրաշալի գործարանն է, յոյժ փափուկ է և դիւրաւ կը վնասուի ։ Շատ պայծառ լոյսը կը հոգնեցնէ և կը տկարացնէ մարդուս աչքերը ։ Այն ամենայն ինչ որ կը մեղմէ պայծառ լուսոյ ազդեցութիւնը, շատ օգտակար է աչաց պահպանութեան, ինչպէս բաց մթագոյն ակնոցները ։ Այն ամենայն արհեստաւորք որոնք բռնադատեալ են միշտ առարկայի մը վրայ աչքերնին սևեռած աշխատիլ կամ մանրացուցով տեսնել իրենց աշխատանքն, ինչպէս ժամացուցագործք, փորագրողք և բնապատումք, ասոնց ամենուն աչքը շատ շուտ կը հոգնի ։ Այսպիսի անձինք պէտք են խնամք տանել իրենց աչաց, ժամանակ ժամանակ վեր վերցընել աչքերնին նայիլ հեռաւոր մութ առարկայի մը ։ Հոգնութիւնը կը տաքցընէ մարդուս աչքերը, դարմանն է պաղ ջուր զարնել աչաց և հոգնութիւն առնուլ ։

Մարդս երբ լուսաւոր առարկաներու ինչպէս ձիւն և արևը զարկած ճանապարհներու վրայ երկար ժամանակ նայելու ըլլայ, շատ կը հոգնի իր աչուըները ։ Գիշերային հրա-

digitised by A.R.A.R.@